ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանի գլխավորած պատվիրակության՝ Արաբական Միացյալ Էմիրություններ (Աբու Դաբի) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձինք՝ Ռուստամ Բադասյան, Սրբուհի Գալյան, Հայկ Ասլանյան և Մարիամ Գալստյան:

Գործուղված անձանց զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարար, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ և ՀՀ ԱՆ հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման բաժնի պետ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Արաբական Միացյալ Էմիրություններ (Աբու Դաբի), 2019թ. դեկտեմբերի 15-ից 20-ը:

Հրավիրող կողմը՝ ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակ:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի անդամ պետությունների կոնֆերանսի 8-րդ նստաշրջանին:

Քննարկված թեմաները՝ Նստաշրջանի ընթացքում քննարկվել և ընդունվել են ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի անդամ պետությունների կողմից ներկայացված մի շարք բանաձևեր, մասնավորապես, Ուկրաինայի և Իսրայելի կողմից համապատասխանաբար ներկայացված՝ «Ուժեղացնելով պետությունների միջև վստահությունը հանցավոր ակտիվների վերադարձի հարցով և ընդլայնելով ոլորտում միջազգային համագործակցությունը» ("Strengthening of trust between states and enhancing international cooperation towards the return of criminal assets") և «Նշելով ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի իրականացման դիտարկման մեխանիզմի տասնամյակը» ("Celebrating the 10th anniversary of the Implementation

Review Mechanism of the United Nations Convention against Corruption") խորագրով բանաձևերը:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանի գլխավորած պատվիրակությունը, որի կազմում էին ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սրբուհի Գալյանը, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հայկ Ասլանյանը և ՀՀ ԱՆ հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման բաժնի պետ Մարիամ Գալստյանը 2019թ. դեկտեմբերի 15-ից 20-ը Արաբական Միացյալ Էմիրություններում (Աբու Դաբի) մասնակցել են ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի անդամ-պետությունների կոնֆերանսի 8-րդ նստաշրջանին:

ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի անդամ-պետությունների կոնֆերանսի 8-րդ նստաշրջանի ընթացքում քննարկվել և ընդունվել են կոնվենցիայի անդամ պետությունների կողմից ներկայացված մի շարք բանաձևեր, մասնավորապես, Ուկրաինայի և Իսրայելի կողմից համապատասխանաբար ներկայացված՝ «Ուժեղացնելով պետությունների միջև վստահությունը հանցավոր ակտիվների վերադարձի հարցով և ընդլայնելով ոլորտում միջազգային համագործակցությունը» ("Strengthening of trust between states and enhancing international cooperation towards the return of criminal assets") և «Նշելով ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի իրականացման դիտարկման մեխանիզմի տասնամյակը» ("Celebrating the 10th anniversary of the Implementation Review Mechanism of the United Nations Convention against Corruption") խորագրով բանաձևերը:

Կոնֆերանսին ներկա են գտնվել ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի անդամ-պետությունների բարձրաստիճան պաշտոնյաներ, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտի փորձագետներ:

ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի անդամ-պետությունների կոնֆերանսի 8-րդ նստաշրջանի ընթացքում հանդես է եկել ելույթով: Իր ելույթով ՀՀ

արդարադատության նախարարը նստաշրջանի մասնակիցներին տեղեկացրել է, որ 7-րդ նստաշրջանից հետո, վերջին 2 տարիների ընթացքում, Հայաստանը քաղաքական և ինստիտուցիոնալ առումով անցում է կատարել դեպի ժողովրդավարություն՝ հատկապես տարբեր մակարդակներում կոռուպցիայի դեմ պայքարի ու կանխարգելման առումով: Այդ համատեքստում Ռուստամ Բադասյանն ընդգծել է, որ նոր Կառավարության գործունեությունը նվիրված է կոռուպցիայի դեմ պայքարին, օրենքի գերակայության ամրապնդմանը, կայուն հասարակության կառուցմանն ու հավելել, որ 2018 թվականի դեկտեմբերին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրությունները միջազգային և տեղական դիտորդական կազմակերպությունների կողմից գնահատվել են իրապես ազատ, արդար, թափանցիկ և ժողովրդավարական:

ՀՀ արդարադատության նախարարը ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի անդամ-պետությունների կոնֆերանսի 8-րդ նստաշրջանի մասնակիցներին ներկայացրել է 2017 թվականի համեմատ 2018թ-ին կոռուպցիոն հանցագործությունների դեպքի առթիվ հարուցված քրեական գործերի վիճակագրությունը, ըստ որի՝ այն աճել է 60%-ով, ինչպես նաև ինստիտուցիոնալ առումով ձեռնարկված միջոցառումները՝ Հակակոռուպցիոն ռազմավարության ընդունում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ստեղծում, ՀԿ-ների և միջազգային գործընկերների առաջարկությունների հիման վրա կատարելագործված հայտարարագրման գործընթաց, հակակոռուպցիոն կրթական ծրագրերի մշակում ու իրականացում, կոռուպցիոն հանցագործությունների ազդարարման համակարգի ներդրում և ազդարարների պաշտպանության օրենսդրական երաշխիքների ապահովում և այլն:

Իր ելույթում ՀՀ արդարադատության նախարարն ընդգծել է նաև իրավական ակտերի մշակման գործընթացում հասարակության ներգրավվածության ապահովման ու կրթական և իրազեկման միջոցառումների իրականացման կարևորությունը:

Ամփոփելով իր խոսքը՝ Ռուստամ Բադասյանը հատկանշական է համարել նաև UNCAC-ի սկզբունքների հիման վրա մշակված, Կառավարության կողմից օրեր առաջ ընդունված ու Ազգային ժողով ուղարկված «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի նախագծի մշակումը, որով նախատեսված իրավական մեխանիզմը թույլ կտա բռնագանձել գույքը, որի ձեռքբերումը նախատեսված էական ծավալներով չի հիմնավորվի օրինական եկամտի աղբյուրներով:

Անհրաժեշտ է նշել նաև, որ ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի անդամ-պետությունների կոնֆերանսի 8-րդ նստաշրջանի շրջանակներում կայացած «Ազգային հակակոռուպցիոն ռազմավարությունները նոր սերնդի համար» հարթակում ևս հանդես է եկել ելույթով: Իր ելույթում Ռուստամ Բադասյանը արձանագրել է, որ կոռուպցիան դարձել է ամենամեծ մարտահրավերներից մեկը ոչ միայն համաշխարհային տնտեսության և օրենքի գերակայության, այլև խաղաղության ու անվտանգության համար՝ նախարարը կարևոր խնդիր է համարել ազգային մակարդակով կոռուպցիայի դեմ պայքարի համապարփակ և արդյունավետ ռազմավարության իրականացումն ու տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում ջանքերի համադրումը:

Վերը նշված պանելային քննարկման ընթացքում ՀՀ արդարադատության Ռուստամ Բադասյանը անդրադարձել է ս.թ. հոկտեմբերին Կառավարության կողմից հաստատված Հակակոռուպցիոն ռազմավարությանը՝ նշելով, որ «նոր սերնդի» հակակոռուպցիոն ռազմավարություններն այլևս չեն դիտարկվում որպես միայն կառավարության ռազմավարություններ. դրանք ժողովրդի ռազմավարություններն են: Այդ համատեքստում նախարարը ներկայացրել է մեկ ու կես տարվա ընթացքում մշակված Հայաստանի հակակոռուպցիոն ռազմավարության ներառական աշխատանքները՝ քաղհասարակության 500 առաջարկ, որի հիման վրա սկզբնական նախագիծը 85%-ով փոփոխվել է, առնվազն 15 հանրային քննարկումների կազմակերպում, այդ թվում՝ բոլոր մարզերում, ՀՀ վարչապետի

գլխավորությամբ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդում երկու քննարկման կազմակերպում և այլն: Նշված Ռազմավարության մշակման հարցում Ռուստամ Բադասյանը կարևորել է նաև ֆինանսական գնահատականն ու թիրախային ցուցանիշների սահմանումը՝ ընդգծելով, որ Կառավարության նպատակը «Թրանսփարենսի Ինթերնեշնլ»-ի կողմից հրապարակվող Կոռուպցիայի ընկալման համաթվի զեկույցում Հայաստանի գնահատականը 35-ից մինչև 55 հասցնելն է:

Հակակոռուպցիոն իստիտուցիոնալ բարեփոխումներին անդրադառնալով՝ նախարար Բադասյանը ներկայացրել է արդեն իսկ ձևավորված Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործառույթները և կոռուպցիայի դեմ պայքարի աշխատանքներում կարևորել նաև ստեղծվելիք Հակակոռուպցիոն կոմիտեի և Հակակոռուպցիոն դատարանի դերը, հակակոռուպցիոն կրթական ծրագրերի մշակումն ու իրականացումը, կոռուպցիոն հանցագործությունների ազդարարման համակարգի ու առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման քաղաքացիաիրավական մեխանիզմների ներդրումը:

Իր խոսքի ավարտին ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանն ընդգծել է, որ նույնիսկ ամենալավ ինստիտուցիոնալ համակարգերն ու ամենաուժեղ մեխանիզմներն ունենալու դեպքում երկրները երբեք հաջողության չեն հասնի առանց մարդկանց մտածելակերպը փոխելու և կոռուպցիայի նկատմամբ զրո հանդուրժողականություն ձևավորելու:

Արաբական Միացյալ Էմիրությունների մայրաքաղաք Աբու Դաբի կատարած այցի ընթացքում ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը հանդիպել է ԱՄԷ-ի Պետական վերահսկողության գրասենյակի նախագահ Հարիբ Սաիդ ալ-Ամիմին, ինչպես նաև մասնակցել է դոնոր գործընկերների՝ Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի գողացված ակտիվների վերականգնման նախաձեռնության, Եվրոպական հանձնաժողովի, ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի, ՄԱԿ-ի

Զարգացման ծրագրի ներկայացուցիչների, ինչպես նաև Սաուդյան Արաբիայի և Արաբական Միացյալ Էմիրությունների պաշտոնյաների հետ հանդիպմանը:

ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանի և ԱՄԷ-ի Պետական վերահսկողության գրասենյակի նախագահ Հարիբ Սաիդ ալ-Ամիմիի միջև տեղի ունեցած հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր, որոնք վերաբերել են միջպետական հետաքրքրություն ներկայացնող թեմաներին և միջազգային համագործակցության ոլորտում առկա խնդիրներին:

Ռուստամ Բադասյանն ու Հարիբ Սաիդ ալ-Ամիմին փոխգործակցությունը խորացնելու պայմանավորվածություն են ձեռք բերել:

Դոնոր գործընկերների՝ Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի գողացված ակտիվների վերականգնման նախաձեռնության, Եվրոպական հանձնաժողովի, ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ներկայացուցիչների, ինչպես նաև Սաուդյան Արաբիայի և Արաբական Միացյալ Էմիրությունների պաշտոնյաների հետ հանդիպման ընթացքում Ռուստամ Բադասյանը ներկայացրել է Հայաստանում իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումները, բարեփոխումների հիմնական ուղղություններն ու առաջիկա անելիքները: Վերջիններս հիմնականում վերաբերել են արդեն իսկ ձևավորված Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործիքակազմին, ստեղծվելիք Հակակոռուպցիոն դատարանի և Հակակոռուպցիոն կոմիտեի գործառույթներին, հակակոռուպցիոն կրթական ծրագրերի իրականացմանն ու առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման քաղաքացիաիրավական մեխանիզմների ներդրման օրենսդրական աշխատանքներին:

ՀՀ արդարադատության նախարարը դոնոր կազմակերպությունների գործընկերների հետ քննարկել է նաև հետագա համագործակցության հնարավոր ուղղությունները:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սրբուհի Գալյանը Աբու Դաբիում կայացած ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի անդամ պետությունների կոնֆերանսի 8-րդ նստաշրջանի շրջանակներում մասնակցել է պանելային քննարկման, որի ընթացքում հանդես է եկել ելույթով: Իր ելույթում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալն անդրադարձել է հակակոռուպցիոն բարեփոխումների կարևոր լոկոմոտիվներից մեկին՝ թվային գործիքներին ու նորարարական լուծումներին:

Խոսելով Հայաստանում իրականացվող հակակոռուպցիոն աշխատանքներից՝ Սրբուհի Գալյանը ներկայացրել է օրենսդրական գործընթացի թափանցիկության և քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցության ապահովման նպատակով ստեղծված www.e-draft.am իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակի գործիքակազմը և նշել, որ բաժանորդագրված օգտատերերի թիվը ներկայում ավելի քանի 45 հազար է, իսկ ամսական այցելությունների թիվը՝ ավելի քան 180 հազար:

Կոռուպցիայի դեմ պայքարում նորարարական լուծման հաջորդ հայկական օրինակը վերաբերել է կոռուպցիոն հանցագործությունների ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակին՝ https://azdararir.am/am/-ին, որի միջոցով ազդարարն անանուն կարող է պետական մարմնին տեղեկացնել կոռուպցիոն դեպքի մասին: 2019 թվականի մայիսից գործող հարթակի միջոցով ստացվել է ավելի քան 180 հաղորդում, որի 22% դեպքերով արդեն իսկ հարուցվել են քրեական գործեր:

Recoverable Signature

X

Rustam Badasyan

Signed by: BADASYAN RUSTAM 3701910731

ՀՀ արդարադատության նախարար

Ռուստամ Բադասյան

24.12.2019թ.